

ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմ. գիտ. դոկտոր Ռ. Ա. ԱՐԲՆԱՄՅԱՆ

Ինդոնեզական կղզիների հետ հայերի ծանոթությունը հին պատմություն ունի: Աշխարհը շրջող ջուղայացի վաճառականները Զավայի առևտրաշահ քաղաքներին ծանոթ էին դեռևս XVI դարի կեսերին:

Հոլանդական հին տարեգրություններից մեկում¹ հիշվում է, որ 1559 թ. Զավայում հաստատված օտարազգի վաճառականների մեջ կար հայազգի Խոջա Սուլեման, որը գործարքներ էր կատարում Իրանից, Հնդկաստանից եկած վաճառականների հետ: Պետք է ենթադրել, որ նա այստեղ հաստատված միակ հայը չէր:

XVII դարում Ինդոնեզական կղզիներում հայկական կայուն գաղթօջախներ լինելու փաստը հավաստում է Կոստանդ Ջուղայացին իր նշանավոր «Աշխարհաժողովում»: Հեռավորարևելյան մի քանի տասնյակ առևտրական խոշոր կենտրոնների թվում, ուր հաստատված կային հայ վաճառականներ, «Աշխարհաժողովում» հիշատակվում են նաև Զաքաթրան (Զակարտա), Մուքասարը (Մակասար) և Տիմորը²: Ինդոնեզական կղզիներում կազմավորված հայկական գաղթօջախների մասին առաջին անգամ խոսել է երկար տարիներ Զավայում ապրած ռուս գիտնական և ճանապարհորդ Իվան Բակունինը: Ըստ էրա տեղեկության, XVII դարում Զավայում ապրել են ավելի քան 2 000 հայեր³: Զավայում ապրող հայերի մասին Ի. Բակունինի հայտնած թվական տվյալն, անշուշտ, չափազանցություն է: Հավանաբար այստեղ ապրող հայ վաճառականների գործունեության շրջանակներն այնքան մեծ ու բազմաբնույթ են եղել, որ Ի. Բակունինին գցել են թյուրիմացության մեջ: Հայերն Իրանից, Հնդկաստանից և այլ երկրներից XVII—XVIII դդ. նորնոր էին միայն գալիս և հաստատվում Ինդոնեզիայի այն քաղաքներում, ուր կային հոլանդացիներ, որոնք, ի տարբերություն անգլիացիների, չէին հալածում, հսկողության տակ չէին վերցնում հայերի առևտուրն ու գործունեությունը: Հայերի նկատմամբ հոլանդացիների ցուցաբերած նման վերաբերմունքն ունի իր պատճառը: Հանձին հայերի նրանք տեսնում էին Արևելքի երկրներին, գրանցում տարվող առևտրի մեթոդներին քաջատեղյակ վաճառականների, որոնք փորձված և հուսալի դաշնակիցներ էին: Հայերին իրենց կողմը գրավելով հոլանդացիները, փաստորեն, նրանց ուղղում էին իրենց քաղաքական և տնտեսական հզոր մրցակիցների՝ բրիտանական առևտրական զորքերը ընկերությունների դեմ:

XVIII դարի կեսերին Ինդոնեզիայի տնտեսական կյանքում հայերի խաղացած ազդեցիկ գերի մասին է վկայում այն փաստը, որ 1741 թ. մարտի 21-ին Հոլանդիայի թագավորի հրովարտակով Ինդոնեզիայի հայերին շնորհվել են հոլանդացիներին հավասար ռազատ քաղաքացու իրավունքներ: Հայերն իրավունք են ստացել ազատ երթևեկելու հոլանդական իշխանության

¹ G. Paulus. A short History of Armenian Community in Netherlands. India, Batavia, 1935, p. 3.

² Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 5994, էջ 1 ա—բ:

³ И. Бакунин. Тропическая Голландия. Пять лет на острове Ява. Петербург, 1912, с. 13.

տակ գտնվող բոլոր տարածքներով, օգտվել հոլանդական նավերից, ցանկացած վայրում հիմնել բնակավայր, կառուցել եկեղեցի և այլն⁴,

XVII դարի և XVIII դարի առաջին կեսի ինդոնեզահայ գաղթօջախների պատմության վերաբերյալ ուշագրավ քիչ բան է հայտնի: Որոշակի է, որ ինդոնեզիայի նավահանգստային քաղաքներում հոլանդացիների կողքին առևտրական տներ ունեին նաև հայերը և որ հայերի գաղթօջախների քարտեզը գնալով ընդարձակվում էր: Հայ գաղթականների նոր խմբերը հիմնականում գալիս էին Զուդայից: Հնդկաստանի հայ գաղթավայրերից նախ գալիս էին Զավայի մայրաքաղաք՝ Բաթավիա, ժամանակավոր հաստատվում այնտեղ, սովորում առևտրի մեթոդներն ու լեզուն, որից հետո ցրվում էին հարևան կղզիներ: XIX դարի 20-ական թթ. արդեն հայկական գաղթականության կղզյակներ կային Սամիրանգում, Զապարայում, Մալանգում, Բոլաում և այլ քաղաքներում: Աշխարհի այս հեռաստանները հասած, հույրենի հողից, բառ ու բանից կտրված հայությունն ամեն ջանք թափում էր սահապանելու իր ազգային նկարագիրը: Ինդոնեզահայ համայնքների հայրենասեր շրջանները եռանդուն միջոցներ էին ձեռնարկում ձուլման վտանգի սուղն առնելու համար, հիմնում էին ազգային կազմակերպություններ: Հայտնի է, որ ինդոնեզահայ համայնքների որոշ գործիչներ նամակագրական կապեր ունեին էջմիածնի կաթողիկոսների հետ: Նրանց հետաքրքրում էր հայրենիքի իրավիճակը, պանդուխտ հայության հայրենիք վերադառնալու հեռանկարը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայրենիք վերադառնալու գաղափարը ինչպես ամենուր, այնպես էլ ինդոնեզիայում հարյուրամյակներ շարունակ ուղեկցում էր հայությանը: Առավել ուշագրավ է, որ ինդոնեզահայությունը շրջաններում հայրենադարձության ջերմ փափագողների շարքում կային նաև հայ խոշոր վաճառականներ: Դա, իհարկե, պատահական չէ: XIX դարի առաջին քառորդում հայ վաճառականների մի շարքի մասը դուրս էր մղվում առևտրական շուկաներից: Անգլիական առևտրական խոշոր ընկերությունների, ապա նաև գաղութային իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով հայ առանձին խոշոր վաճառականներն ու ընկերությունները կծկվել, փոքրացել էին և մեծ ճիգերով էին կարողանում պահպանել իրենց գոյությունը գլխավորապես այն վայրերում, ուր չէ՛ն ազատ էին անգլիական մրցակցությունից: Նրանց վիճակը սկսեց ծանրանալ նաև Հոլանդիայի և այլ խոշոր տերությունների պետական հովանավորության տակ հորձող առևտրական ընկերությունների դեմ մղվող մրցակցության հետևանքով: Կործանման եզրին հասած հայ առևտրականները և նրանց հետ կապված շրջանները փրկության միակ ելքը գտնում էին ազատագրված հայրենիք վերադառնալու մեջ:

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման մասին ներսես Աշտարակեցու ավետաբեր նամակները հույսի դռներ էին բացում նաև ինդոնեզահայության բոլոր խավերի առջև: Այս նամակների ազդեցության տակ ինդոնեզահայ հայրենասեր շրջանները եռանդուն ջանքեր թափեցին, հայրենասիրական կազմակերպություններ և միություններ հիմնեցին, շնորհակալական նամակներ ուղարկեցին ռուսական արքունիք և էջմիածին⁵: Ներանցից շատերը որոշեցին թողնել օտար հորիզոնները և վերադառնալ Արարատյան աշխարհ: Տունդարձի ցանկություն հայտնող հայերի մեջ աշխատավոր մարդկանց կողքին կային նաև մեծահարուստներ: Դրանց մեջ էր հեռավոր Սամիրանգ հասած և հեթաթային հարստություն կուտակած զարաբաղցի Հովսեփ Ամիրխանյանը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա երկու նամակները՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն և Միքեմ կաթողիկոսին: Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը գրված է Նրևանի ազա-

⁴ Braces Annals of the Honorable East India Company. London, 1896, vol. III, p. 106.

⁵ ՄՄ արխիվ, Կաթող. դիվան, Թղթ. 14, վազ. 5, Թղթ. 18, վազ. 1, 2:

տագրման լուրն ավետող նրա նամակն ստանալուց անմիջապես հետո Այս նամակի մասին հայադիտության մեջ խոսք եղել է։ Օգտվելով մեզ անհայտ աղբյուրից, «Երկրագունդը» հրատարակել է նամակի մոտավոր բովանդակությունը և հույս հայտնել, որ կգտնվի նրա բնագիրը⁶։ Ապա Ալ. Երիցյանը, որի ձեռքի տակ եղել է նամակի ուսերեն թարգմանությունը, այն վերաթարգմանել է հայերեն և օգտագործել իր «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում» մեծաթիվ ուսումնասիրության մեջ⁷։

Հ. Ամիրխանյանի երկրորդ նամակը՝ ուղղված Եփրեմ կաթողիկոսին, որը հայտնի չէր հայագիտությանը, պահվում է Մատենադարանի արխիվում⁸։ Ահա թե ինչ է դրում Ներսիս Աջտարակեցուն հեռավոր ինդոնեզիայում բնակվող հայրենակարոտ դարաբաղցին. «...կատարվեցավ փափագս։ Այն քաղցր համբավները մեծապես ուրախացրեցին մեզ. այժմ մենք ավելի երջանիկ ենք մեր նախնիքներից, վասնզի արժանացանք տեսանել ամենասիրելի հայրենյաց ազատությունը։ Եվ ուրեմն սրբազան պարտավորություն ենք համարում արտահայտել մշտական երախտագարտության մեր խորին դագմունքը Ռուսիո կայսեր, մեր հին հայրենյաց մեծահոգի ազատիչին...»⁹։ Եփրեմ կաթողիկոսին ուղարկած երկրորդ նամակում Հ. Ամիրխանյանը, հայտնելով իր ցնծությունը հայրենիքի ազատագրման առիթով, գրում է, որ թեև Ներսիսն առաջնորդը (Աջտարակեցին—Ռ. Ա.) «լիալիք» գրել է կատարվածի մասին, սակայն ինքը լրիվ բավարարված չէ և խնդրում է կաթողիկոսին, որ ինքն անձամբ ավելի մանրամասն գրի. «Բայց ես հատկապես փափակիմ սրբազան հօրէտ իմմէ ծանօթանալ ամենայն բարիքին, որ մեր խեղճ ասկն ստացել ան և մխիթարվէլ»¹⁰։ Հ. Ամիրխանյանը կաթողիկոսին խնդրում է գրել «ասկի կացութեան վերաբերիալ, կամ ի՞նչ բազմութիւն են, ինչ վիճակի ան»¹¹։ Նամակագրին առանձնապես հետաքրքրել է, թե «ի՞նչ ա ուսաց տերութեան կարծիքն վասն մեր խեղճ ասկին։ Կամին հատուկ տերութիւն հաստատել, թե՞ կամին ուրեանք կառավարիլ»։ Անմանապես աղաչում եմ,— շարունակում է Հ. Ամիրխանյանը,— հաղորդել ինձ, թէ Կայսրության, Վրաստանի և Հայաստանի հայք ի՞նչ տեսակ կյանք են վարում, քանի՞ են թվով և ինչ դրություն մեջ են նոքա։ Ցանկալի է ինձ նույնպես գիտենալ, թե Ռուսիան ինչ մտադրություն ունի մեր ազգի վերաբերմամբ։ Արդյոք ինքն տիրապետելով պիտի կառավարե Հայաստանը, թե՞ պիտի դարձնե սորան յուր տերության մի առանձին անկախ մասն։ Միով բանիվ հաղորդեցեք ինձ, թե Ռուսաց տերությունն ի՞նչ դիտավորություն ունի մեր ազգի վիճակի մասին, այդ տեղեկություններով դուք ինձ կպարտավորեցնեք»¹²։

Այս ամենից հետո Հ. Ամիրխանյանը պարզել է մտադրությունը. «Նաև եմ միակ փափակն այ իմ հայրենիք աշխարհքն, որ Արցախ և Փայտակարան աշխարհքն այ, թէ հնար է փողով դնել կամ հարկատուութեամբ դտանել, ինչ քանակութիւն լինի պատրաստ եմ հատուցանել, եթէ ըստ իմ ցանկութեան եզտանեմ, այսինքն բոլորովն իմ հրամանի ներքոյ լինի»¹³։ Հ. Ամիրխանյանը խոստացել է ուսական կառավարության համաձայնության դեպքում այնպիսի մի գումար ներդնել, որից ստացած եկամուտը միայն կկազ-

6 «Երկրագունդ», Մանչեստր, 1864, № 25, էջ 12։

7 Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում. մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 507—512։

8 Նամակը գրված է Հ. Ամիրխանյանի կամ նրա քարտուղարի ձեռքով, 1829 թ. հոկտեմբերի 20-ին, Ինդոնեզիայի Սամիրանգ քաղաքում, Ղարաբաղի բարբառի հետ խառնված, XIX դարի սկզբի աշխարհարկով (տե՛ս ՄՄ, Կաթող. դիվան, թղթ. 62, վավ. 75)։

9 Ալ. Երիցյան. նշվ. աշխ., էջ 508։

10 ՄՄ, Կաթող. դիվան, թղթ. 62, վավ. 75։

11 Նույն տեղում։

12 Ալ. Երիցյան. նշվ. աշխ., էջ 509։

13 ՄՄ, Կաթող. դիվան, թղթ. 62, վավ. 75։

մի տարեկան կես միլիոն ռուբլի: Այս նամակում Հ. Ամիրխանյանը շեշտել է, թե շահույթ ստանալը չէ, որ թելադրել է իրեն նման առաջարկ անել, այլ հայրենասիրությունը: «Հավատացնում եմ Ձեզ, ողորմած տեր,— գրում է նա,— այստեղ ոչինչ բանի պակասություն չունիմ: Գետիններ, նաւեր, շինություններ, ամեն ինչ ունիմ բաւականաչափ, բայց բաղդի այս բոլոր ճոխ պարգևները տակաւին ինձ չեն մխիթարում, երբ մտաբերում եմ թե ինչ վիճակի մեջ է իմ սիրելի հայրենիքը և որպիսի թշվառութիւն են կրում ոմանք իմ հայրենակիցք: Այս պատճառով շատ փափագում եմ ունեցվածքիս մի մասն հանել (նուիրել) յօգուտ և ի թեթևութիւն վիճակի իմ հայրենակցոցս»¹⁴: «Եթե իմ մտադրութիւնս կիրառութեւն,— գրել է ներսես Աշտարակեցուն Հ. Ամիրխանյանը,— ես ընտանիքովս և ունեցածս գումարներովս կդամ Հայաստան և իմ մնացած կարողութիւնից կնշանակեմ յօգուտ իմ հայրենակցաց այնքան, որ կարողանան եկամուտ բերել տարեկան շորս կամ հինգ լաք (1 լաքը հավասար է 100 000 ռուբլի — Ռ. Ա.), թէ իմ կենդանութեան ժամանակ և թէ յետ իմ մահուն, վասնզի միայն իմ կալուածքը, ահագին քանակութեամբ շաքար և սուրճ է տալիս, ուր մնայ մյուս գետիններս, որ ամեն տարի մեծ եկամուտ են բերում: Շնորհիւ Ասածոյ ես այստեղ մի տիրապետող իշխանի հավասար կեանք եմ վայելում: Միայն հայրենեաց սերն է վշտացնում ինձ: Յուսամ թէ Ամենաբարձրիս Աստուած կը կատարէ իմ բարի դիտաւորութիւնս»¹⁵:

Խոսելով ներսես Աշտարակեցուն Հ. Ամիրխանյանի ուղարկած նամակի մասին Ալ. Երիցյանը գրում է. «Վառվեցավ Ղարաբաղցի գաղթականի սիրտը հեռավոր օտարության մեջ, և նա հարստությամբ և փառքով կշտացած, դանկացավ հիմա վերադառնալ յուր աղատված հայրենիքը և յուր ահագին կարողությունից մի այնպիսի գումար հատկացնել կարոտ հայրենյաց օգտին, որ մշտապես, տարեկան մոտ կես միլիոն ռուբլի եկամուտ կբերեր»¹⁶:

Եփրեմ կաթողիկոսին և ներսես Աշտարակեցուն ուղղած երկու նամակներում էլ Հ. Ամիրխանյանը հայտնել է, որ ինքը մտադրում է մի քանի նավերով ուղևորվել Հոլանդիա, քանի որ «...տեղն մեծ գործ ունիմ Հոլանդութեան թագաւորի հետ, զի հետ աներտէլես ն(ա)ւերս կրկին յետ Էտուարկեմ առ Հնդստան և ես հանց կը կամ Ռուսաց աշխարհն մին հանձնարարական գրով Հոլանդութեան թագաւորեն առ Ռուսաց կայսրն և տեղեն առ Հայաստան... եթէ տէր աջողի, յուսամ, որ կարող կլինեմ ... մեր խեղճ ասկին մխիթարել ... վասնզի մին թագաւորի վայել թողել ամ հարստութիւն»¹⁷:

Հ. Ամիրխանյանի այս նամակը, ի թիվս այլոց, ներսես Աշտարակեցին ուղարկում է Պետերբուրգ՝ Խաչատուր Լազարյանին: Վերջինս, հավանաբար արքունի թարգմանիչ, հայազգի Խուդաբաշևի միջոցով, նամակը թարգմանել տալով ռուսերեն, հանձնում է Բենկենգորֆին՝ այն կայսրին հասցնելու համար: Նամակը հանձնվում է ռուսաց կայսրին: 1830 թ. դեկտեմբերի 3-ին ստացվում է Բենկենգորֆի հետևյալ պատասխանը. «Սամիրանգում բնակվող պարոն Ամիրխանյանի նամակը առ ներսես եպիսկոպոսն, որ դուք հաղորդեցիք ինձ հանդերձ ռուսերեն թարգմանությամբ, ես բաղդ ունեցա ամենահպատակորեն զեկուցանել թագավոր կայսեր այն ենթադրությամբ, որ Ռուսիո իշխանության ներքո գտնվող Հայաստանում մի այդպիսի հարուստ դրամատիրոջ բնակությունը այդ երկրին էական և շատ նշանավոր օգուտ կբերե: Նորին կայսերական մեծությունը տեսնելով, որ պարոն Ամիրխանյան, մտադիր լինելով գալ այստեղ, հույս ունի նորին մեծությանը ներկայանալու բազմապիկությունն ունենալ, և ցանկանում է քանի մի տեղեկություններ ստանալ Ռուսիո մասին, բարեհաճեց ամենաողորմածաբար պատասխանել»:

¹⁴ ՄՄ, Կաթող. դիվան, Թղթ. 62, վազ. 75:

¹⁵ Ալ. Երիցյան, Նշվ. աշխ., էջ 509:

¹⁶ Նույն տեղում, էջ 510—511:

¹⁷ ՄՄ, Կաթող. դիվան, Թղթ. 62, վազ. 75:

թող նա գա պատեղ, ես նորա պահանջած տեղեկությունները ինքս կտամ՝ յուրեն, երբ կտեսնեմ նորան»¹⁸։

Խ. Լադարյանը կայսեր այս պատասխանը հաղորդեց Աշտարակեցուն, որը իր հերթին Հ. Ամիրխանյանին հիշեցրեց դալ Պետերբուրգ։ Ի՞նչ եղավ Հ. Ամիրխանյանը հետագայում. եկավ, արդյոք, Ռուսաստան, հանդիպե՞ց ցարին, թե՞ ոչ։ Այդ մասին Ալ. Երիցյանը գրում է. «Հայտնի է, որ Ամիրխանյանը ուղևորվել է Հոլանդիա՝ այնտեղից Պետերբուրգ գալու համար, բայց թե հասե՞լ է արդյոք Պետերբուրգ և բանակցե՞լ է ցարական արքունիքի հետ, ոչինչ հայտնի չէ»¹⁹։

Մատենադարանի արխիվում պահպանվել է մի հետաքրքիր վավերագիր, ուր մասամբ գտնում ենք մեզ հետաքրքրող հարցի պատասխանը։ Վավերագիրը նշանավոր Շահամիր Սուլթանում Շահամիրյանի որդիների՝ Հովհաննես և Հակոբյան Շահամիրյանների 1806 թ. Վրաստանի ոռոսաց կառավարչին ուղարկած նամակի պատճենն է²⁰։ Շահամիրյանի ժառանգները խնդրել են պարգարանել, թե Լոռին և նրա շրջակայքը, որը ըստ Հերակլի հրովարտակի նվիրարեցվել էր իրենց հորը, ուսմանը ճանաչում են որպես Շահամիրյանների ժառանգություն, թե՞ ոչ։ Ահա այդ նամակի շորորոդ էջի վրա է, որ ներքեմ կաթողիկոսն իր ձեռագրով, տարիներ անց ավելացրել է հետևյալը. «Յովսէփ Յովհաննէս Ամիրխան մեծ կալուածատէր՝ ի Զաւայ կղզին Հնդկաստանի խնդրեց ի նիկողայոս Կայսրէն Ռուսաց ստանալ յինքենէ 500 000 ֆրանքնոց եկամուտս ի տարին, և փոխանակ այնր տալ չինքեն ի սեպհականութիւն զԱրարատեան նահանգն ուր գտանին Երևան չէ նախիջևան՝ այն է միայն Արարատեան դաշտն սկսեալ ի Կուղբայ ցրողթն վասն հաստատելոյ անդ ղՀայկական իշխանութիւն ընդ պաշտպանութիւն ոռուսաց և դաշնակից նորին, բայց կայսրն ոչ համաձայնեցաւ զայն առաջարկ՝ պատճառելով, թէ արդեն ի 1828 ամէ դայն նահանգ համարուել է նահանգս Ռուսաստանի և զինքն անուանել է «Արքայ Հայաստանի»²¹։

Հեռավոր ակերում ապրող, հայրենակարոտ Հ. Ամիրխանյանի հուզառատ նամակները հայրենիքի ազատագրման ջերմ ու անմիջական արձագանքներն են, նամակները խոսում վկայությունն են այն հակայական ոգեվորության, որ առաջացրել էր Հայաստանի ազատագրման լուրը և որը պարուրել էր Ինդոնեզիայի հայ գաղթօջախի բոլոր խավերին։

Իսկ ինչպե՞ս դասավորվեց Հ. Ամիրխանյանի հետագա կյանքը։

Բանն այն է, որ թե՛ Ալ. Երիցյանը և թե՛ մենք ժամանակին Հ. Ամիրխանյանի մասին խոսել էինք միայն ներքեմ կաթողիկոսին և ներքեմ Աշտարակեցուն ուղարկած նրա նամակների կապակցությամբ, ուրիշ ոչինչ։

Այս անգամ որոշեցինք պրպտումներն ընդարձակել և փորձել գտնել մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները։ Մեր որոնումները մասամբ հաջողությամբ ավարտվեցին։ Պարզվեց, որ Հ. Ամիրխանյանի մասին ժամանակին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդել Գևորգ Ավես, Զաքարյանը²², Գեորգ Պաուլյուսը²³, Էդուարդ Էլլիսը²⁴, Պողոս Պողոսյանը²⁵ և ուրիշ-

¹⁸ Ալ. Երիցյան. նշվ. աղբ., էջ 511։

¹⁹ Նույն տեղում։

²⁰ Ա. Գ. Աբրահամյան. Համառոտ ուրվագիծ հայ գաղթօջախների պատմության. հ. Բ. Երևան, 1964, հ. Բ, էջ 299։

²¹ ՄՄ, Կաթող. դիվան, թղթ. 17, վավ. 68, էջ 4։

²² Գևորգ Ավես Զաքարյան. Զավա կամ հոլանդական Հնդկաստան և Հայք..., Կալկաթա, 1856, էջ 56։

²³ G. Paulus. Op. cit., p. 7.

²⁴ E. Ellis. Conclse History of Armenians in India (Մատենադարանի արխիվ ֆոնդ՝ Անհատական անձանց, թղթ. համ., գործ 30)։

²⁵ P. Pogolian. The short history of Armenians Settlenents in Netherlands-Batavia, 1937, p. 6.

ներս նրանց հաղորդած ոչ ընդարձակ տեղեկություններից պարզվում է հետևյալը:

Արևելքի երկրներում, հատկապես Հնդկաստանում երկարատև թափառումներից հետո, XIX դարի սկզբներին Հ. Ամիրխանյանը դալիս է Ջավա, հաստատվում Սամիրանգում: Այստեղ իր երիտասարդ հայրենակցին հովանավորության տակ է վերցնում և աջակցում նշանավոր Գևորգ Մանուկ Մանուչարյանը, Հետագայում, երբ խելոք և աչքաբայ դարաբաղցին սովորում է տեղի լեզուն և հուանդերեն, Գ. Մանուկի համաձայնությամբ և օրհնանքով հեռանում է նրանից, ձեռնարկում ինքնուրույն կործանելություն և շուտով տեր դառնում մոտ ութսուն ձեռնարկությունների, Հ. Ամիրխանյանը հատկապես արագ հարստացավ այն բանից հետո, երբ կարողացավ հուանդացիներից ձեռք բերել հսկայական պլանտացիաներ և սուրճի, շիլակի խեժի, ինդիգոյի առևտրի մենաշնորհ: Բայց սկսած 1826 թ., գրում է Հ. Ամիրխանյանի կրտսեր ժամանակակից Գ. Զաքարյանը, «ամենայն փառք և յաջողութիւնք նորա սկսան խոնարհիլ և կարկտեցին ի վերայ նորայ ձախորդութիւնք յամենայն կողմանց, որոց սկիզբն եղև խռովութիւնք Զաւայ որմն ոչ միայն կրեաց զբազումս վնաս, այլև յետոյ տուժեաց զհարկ խռովեալ տեղեացն ընդդէմ դաշին տէրութեան»²⁶:

Ինչի՞ մասին էր խոսքը:

Անգլո-հոլանդական պատերազմը, որը սկսվել էր Եվրոպայում 1810 թ., անցավ նաև գաղութները: 1811 թ. Անգլիան 11-հազարանոց զենամտ իջեցրեց Բաթավիա, հոլանդական փոքրաթիվ ուժերը չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ և հանձնվեցին: Մայրաքաղաքի հանձնումով, փաստորեն, ողջ «Հոլանդական Հնդկաստանը» անցավ անգլիական տիրապետության տակ: Նոր նշանակված գեներալ-նահանգապետ Ստեմֆորդ Ռաֆլզի կողմից Զավայում ձեռնարկված կտրուկ միջոցառումները համապատասխանում էին անգլիական բուրժուազիայի առևտրական և հատկապես արդյունաբերական շրջանների շահերին: Սկսեցին դրամով գանձել բոլոր հին ու նոր հարկերը²⁷: Ռաֆլզի միջոցառումներից երկուսը առնչվեցին նաև հայերին: Նախ, Ռաֆլզի հրամանով բոլոր նավահանգիստները բացվեցին եկող նավերի առջև: Առևտրականների ել ու մուար Ինդոնեզական կղզիներ ավելացավ ավելի քան տասն անգամ²⁸: Նման պայմաններում, հասկանալի կերպով, ավելացավ նաև Եվրոպայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Զինաստանից, Սինգապուրից, Բիրմայից և աշխարհի այլ երկրներից եկող հայկական նավերի թիվը: 1813 թ. Զավայի նավահանգիստները ժամանած օտարերկրյա 156 առևտրանավերից 39-ը եղել են հայկական²⁹, անգամ հայնուն: Սա, իհարկե, մեծապես նպաստում էր թե՛ տեղի և թե՛ նոր եկող արտաքին առևտրով զբաղվող հալ վաճառականների գործին: Միաժամանակ Ռաֆլզը օգնեց ընդունեց, որով Ինդոնեզական կղզիների ողջ հողը համարվեց անգլիական թագավորի սեփականություն և հարկադրվեց մի քանի անգամ ավելի ծանր պայմաններով, քան հոլանդական տիրապետության օրոք: Այս նոր օրենքը ծանր հարված հասցրեց բոլոր հողատերերին, այդ թվում նաև պլանտացիաներ ունեցող հայերին, որոնց թիվը փոքր չէր: Առաջին ծանր հարվածն ուտադավ Հովսեփ Ամիրխանյանը, Հայ պլանտատորին մեծ

²⁶ Գ. Ա. Զաքարյան. նշվ. աշխ., էջ 58:

²⁷ А. Б. Беленький. Из истории национально-освободительного движения в Индонезии.—НАИА, 1963, № 2, с. 171.

²⁸ Э. В. Корниандер. Торгово-статистический очерк Явы. СПб., 1889, с. 212.

²⁹ Հ. Հորդանանյան. Պատմություն Նիդերլանդական Հնդկաստանի հայ դաղթ-օջախների պատմության հնագույն շրջանից մինչև մեր օրերը. Երուսաղեմ, 1937, էջ 237:

վնաս պատճառեց նաև Ջավայում բռնկված հակազաղութային ապստամբությունը, որը ղեկավարում էր Ինդոնեզիայի ազգային հերոս Դեպանազարը: Ավելի քան 18 ամիս պլանտացիաներում աշխատանք չկատարվեց, բերք չհավաքվեց: Չնայած դրան, ինչպես վկայում է Գ. Ջաքարյանը, նորից կղզի վերադարձած հոլանդական գաղութային իշխանությունները Ամիրխանյանից «բռնի ուժով խլեցին 930 հազար գիլդեր գումար»: Սրանից բացի հոլանդացիները խլեցին նաև Հ. Ամիրխանյանի պլանտացիաների մի մասը: Այնուհետև Հ. Ամիրխանյանը իրադրությունը տանուլ տվեց բազմաթիվ դատեր, «անիրավ պահանջման», երկու մեծ նավերը խորտակվեցին և այլն: Ունեզերկված Հ. Ամիրխանյանը շատ է չանում խլվածը վերադարձնել, սակայն դա նրան չի հաջողվում:

Այս բոլորն իմանալուց հետո ականա հիշում ես Հ. Ամիրխանյանի՝ Եփրեմ կաթողիկոսին և ներսես Աշտարակեցուն գրած նամակների այն տողերը, ուր նա հայտնում է, որ ինքը շուտով գնալու է Հոլանդիա, որ Հոլանդիայի թագավորի հետ գործ ունի: Պետք է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ, ոչ մի հաջողության չհասնելով, Հ. Ամիրխանյանը որոշել էր գնալ Հոլանդիա և անձամբ թագավորին ներկայացնել իր բողոքը: Հոլանդիայի թագավորը պետք է որ անձամբ ծանոթ կամ գոնե լսած լիներ Հ. Ամիրխանյանի մասին, քանի որ նրա նման մեկը, որի նավերն ակոսում էին Հնդկաստանից Ինդոնեզիա—Չինաստան—Հոլանդիա ընկած ջրերը, մեկ-երկուսն էին Ինդոնեզիայում:

Ժամանակակիցները միաբերան վկայում են, որ ազգասեր ղարաբաղցին արտակարգ հոգատար է եղել իր հայրենակիցների նկատմամբ: Նրանք տեղեկացնում են, որ Հ. Ամիրխանյանի մոտ ծառայող հայերի թիվն անցնում էր 110-ից: «Տուն նորա,— գրում է Գ. Ջաքարյանը,— էր տեղի ապաստանի հայրենեաց մերոց և սեղան նորա բաց վասն ամենայն քաղցելոց»³⁰: Մեկ այլ ժամանակակից գրում է. «Իր հաջողակ օրերին Ամիրխանյանը չէր խնայում իր մեծահոգի օգնությունը բոլոր նրանց, ովքեր կարիքի մեջ էին: Նա իր կալվածներում բացված ուներ հատուկ սեղանատներ, որտեղ օրեկան անվճար կերակրվում էին 40-ից ավելի կարիքավոր հայ մարդիկ: Նրա տունը ապաստան էր հայերի համար: Մեծ հարգանք էր վայելում տեղացիների մոտ որպես մեծահոգի և բարեսիրտ մարդ»³¹:

Ե. Էլլիսը, որը ի թիվս Ինդոնեզիայի մյուս անվանի մեծահարուստների, խոսել է նաև Հ. Ամիրխանյանի մասին, հայտնում է, որ նա ունեցել է ինը զավակ՝ չորս տղա և հինգ աղջիկ: Տղաներից երեքի անունները հիշատակվում են՝ Կորնելիոս, Պողոս, Կարապետ³²: Կորնելիոս Ամիրխանյանը լուսանկարիչ էր, հմուտ դիտակ մի քանի լեզուների: Հաստատվել էր Բանիվ-մաս քաղաքում: Նրա Պողոս եղբայրը խոշոր խանութներ ուներ Մալանգում: Հետագայում տեղափոխվեց Եվրոպա: Հ. Ամիրխանյանի մյուս ժառանգների մասին ոչինչ հայտնի չէ:

1933 թ. հուլիսի 1-ին գերմանական «Վայսբադեներ ցայտունգ» թերթը «Հեքիաթային հարստություն, բայց ոչ հեքիաթ» վերնագրով մի փոքրիկ, սենսացիոն հոդված հրատարակեց հետևյալ բովանդակությամբ. «Մի այլ ժառանգական պատմություն հնչում է որպես հեքիաթ «Հազար ու մի գիշերից»: Մեկը, Ամիրխանյան ազգանունով, վախճանվում է 1831 թ. և միայն այժմ նրա ժառանգներն իմանում են, որ նա թողել է մեծ կարողություն, որը հաջորդող տարիների ընթացքում աճելով հասել է վեց միլիոն ֆունտ ստեռլինգի (յոթ հարյուր միլիոն մարկ): Եվ ոչ մի մարդ, բացի Բոմբեյի բանկի կառավարից, այդ մասին չի իմացել: Ժառանգներին գտնելու հույսով Բոմ-

30 Գ. Ա. Ջաքարյան. Նշվ. աղյ., էջ 58—59:

31 E. Ellis. Op cit., p 7—8.

32 Նույն տեղում, էջ 70:

բեյի բանկի կառավարիչը կտակի մասին հայտարարություն է հրատարակել, ժառանգության հավակնորդներ եղան ամեն կողմից՝ Հնդկաստանից, Տաճկաստանից, Սուրիայից, Հունաստանից, Իտալիայից, Ֆրանսիայից, Իսպանիայից և Ամերիկայից: Երուսաղեմի Հայոց պատրիարքը զբաղվում է այդ ժառանգության հարցերով»³³:

Այս հիրավի սենսացիոն հոդվածի լույս տեսնելուց անմիջապես հետո Հնդկաստանում, Պարսկաստանում, Եվրոպայում և այլուր հանգես եկան տասնյակ մարդիկ, որոնք հավակնում էին լինել Հ. Ամիրխանյանի օրինական ժառանգներ:

Նշված հոդվածի հրատարակումից հետո իրարով անցան նաև էջմիածինը, Նոր Զուղայի հայոց առաջնորդարանը, Երուսաղեմի, Պոլսի պատրիարքարանները և հայկական մի քանի այլ կաղմակերպություններ: Սկսեցին փոքրիկ արխիվները, չափաբերականները և այլն՝ Ամիրխանյանի տոհմաբանությունը պարզելու համար: Հավանաբար Գևորգ Ե կաթողիկոսը դիմել է Պոլսի, Երուսաղեմի պատրիարքարաններին, Նոր Զուղայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի եկեղեցիներին և պահանջել փնտրել, գտնել փաստեր Հ. Ամիրխանյանի մասին:

Հետաքրքիր է այդ պրպտումների արդյունքներից մեկը: Այսպես, Գևորգ արքեպիսկոպոս Ասրլանյանը, հավանաբար ի պատասխան Գևորգ Ե կաթողիկոսի հարցմանը, ուղարկել է հետևյալ տեղեկանքը. «Պատրիարքարանիս մեջ Ամիրխանյան առնել ունի իր ճյուղավորումը: Այդ գերդաստանի նախնիները Ղարարազեն եկած և Թեհրան քաղաքի մեջ ապրած են Պարսից շահաստանը: Դրանց գերդաստանը ելևմտյան և բանկային գործով զբաղվելով մեծ դիրք են շինած, և խանության տիտղոս առած»³⁴:

Հ. Ամիրխանյանի ժառանգության խնդրով զբաղվել է նաև Երուսաղեմի պատրիարքարանը. այստեղ ևս ոչինչ պարզել հնարավոր չի եղել: «Հիշյալ ժառանգական խնդիրը մնացել է մթության մեջ»³⁵:

Ոչինչ չեն տվել նաև Տրդատ քահանա Հովակիմյանի պրպտումները Մադրասի արխիվներում, բանկերում և այլուր³⁶:

Եգիպտոսում հրատարակվող «Արև» թերթը 1933 թ. հուլիսի 23-ին հրատարակեց «Բ՛վ էր Հովսեփ Հովհաննես Ամիրխանյանը և ինչպե՞ս կուղևո Հայաստանը գնել գրամով» հոդվածը, ուր բավականին հետաքրքիր փորձ է արված պարզելու Ամիրխանյանի հանելուկը³⁷:

Ահա այդ հետաքրքիր պատմությունը:

Նազիր շահը ղարաբաղցիներից պահանջում է զինական դործի երկու հմուտ մասնագետներ ուղարկել Պարսկաստան՝ իր բանակում թնդանոթածիգ և հետևակ զորամասեր կազմակերպելու համար: 1740-ական թթ. Ղարաբաղից Թեհրան են ղալիս երկու եղբայրներ՝ Ամիրն ու Զոհրաբը, որոնք Նազիրը շնորհում է խանի տիտղոս: Դրանից հետո եղբայրները կոչվում են Ամիրխան և Զոհրաբխան: Ամիրխանի որդին երիտասարդ տարիներին մեկնում է Մուշ, Ս. Կարապետ վանքում կրթություն ստանում, խորանում է երգ-կրթության մեջ, ապա վերադառնում է Թեհրան: Սա նշանավոր Ամիր Օղլուն է, որի երգերը մինչև այսօր էլ պարսկահայ գաղթօջախներում երգվում են:

Ի դեպ, Զուղայի հայ աշուղներով զբաղվող բանասեր Արամ Երեմյանը

³³ Հոդվածի լնադիրը և հայերեն թարգմանությունը ահ՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4575, թ. 5:

³⁴ Նույն տեղում, գ. 4546, թ. 6:

³⁵ Նույն տեղում, գ. 4575, թ. 2:

³⁶ Նույն տեղում, գ. 4577, թ. 2:

³⁷ «Արև», Կահիրե, 23 հուլիսի 1933:

նույնպես Ամիր Օղլուն համարում է Ղարաբաղից սերված³⁸։ Ըստ նրա, Աշուղ Ամիրը իր 12—13 տարեկան որդուն՝ Հովսեփին ուղարկում է Մադրաս, ուր աշխատեց պատանին իր ազգականներից մեկի մոտ սովորում և հմտանում է առևտրի գործում։ Առևտրի նպատակով Արևելքի մի շարք երկրներում բախտը փորձելուց հետո նա գալիս և հաստատվում է Սամիրանի գաղաքում գործող նշանավոր հայ սեծահարուստ Գևորգ Մանուչարյանի մոտ, կարճ անց տիրապետելով տեղի լեզվին՝ սկսում է ինքնուրույն գործունեություն ծավալել։ Տեղական իշխանություններից ձեռնտու պայմաններով ձեռք բերելով հողային հսկայական տարածություններ, Հ. Ամիրխանյանը հիմնում է սուրճի, թնի, ինդիգոյի պլանտացիաներ և սեփական առևտրանավերով մխրճվում Ամստերդամից Մինգապուր հասնող միջազգային առևտրի մեջ, կարճ ժամանակ անց դառնում է Ինդոնեզիայի հարուստ մարդկանցից մեկը, օտարների մեջ ամենահարուստը³⁹։ Սակայն 1825—1830 թթ. Զավալում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ Հ. Ամիրխանյանը կորցնում է մոտ 1 մլն գիլդերի՝ Հոլանդացիների կարծիքով հայրենակարոտ Ղարաբաղյանի վախճանվել է օտարության մեջ, 53 տարեկան հասկում⁴⁰։

Երկու ամիս անց հրատարակված հոդվածի շարունակության մեջ հեղինակն անդրադարձել է Հ. Ամիրխանյանի քաղաքական հայացքներին և պլաններին⁴¹։ Մանոթ լինելով Հ. Ամիրխանյանի՝ Ղարաբաղը գնելու մտադրությանը, հեղինակը գրում է, որ դա մեծահարուստի քաջաճույշ կամ երկրի տեր դառնալու ցանկություն չէր. «Ավելի շատ դա քաղաքական մի լուրջ մտադրություն էր, իր ողջ ունեցվածքը հայրենիքի բարօրությանը և միավորմանը ղոհաբերելու ուզնիվ քալը»⁴²։

Դժբախտաբար առաջիմ այսքանը կարողացանք պարզել Հովսեփ Ամիրխանյանի և նրա շուրջը հյուսված լեգենդի մասին։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКИХ ПОСЕЛЕНИЙ ИНДОНЕЗИИ

Доктор ист. наук Р. А. АБРАМЯН

Резюме

Армяне начали проникать на Индонезийские острова с середины XVIII века. В начале XIX века во многих городах Индонезии существовали армянские переселенческие очаги. Услышав об освобождении Армении от персидского ига, многие армяне решили покинуть чужие края и вернуться на родину. Среди них был Овсеп Ованнес Амирханян—крупный плантатор, судовладелец, торговец, накопивший сказочное богатство и дошедший до индонезийского города Самиранг из далекого Карабаха. До нас дошли два его письма, адресованные Ефрему католику и Нерсесу архиепископу Аштаракети, в которых он просит их узнать и сообщить ему о планах русского правительства в отношении Армении и Карабаха, так как он намерен со своей семьей и накопленным богатством переехать и обосноваться в родном Карабахе. Амирханян сообщал также о своем намерении, при согласии русского правительства, купить Карабах. Узнав от Бенкендорфа о намерении Амирханяна, царь решил пригласить его в Петербург для беседы. Однако политические события в Индонезии в 20-х годах XIX века разрушили все планы Амирханяна.

³⁸ Ա. Երեմյան. Հնդկահայ և ինդոնեզահայ մշակույթը.—«Նոր ազդարար», Կալկաթա, 1956, № 5։

³⁹ «Արև», Կահիրե, 20 օգոստոսի 1932։

⁴⁰ Նույն տեղում։

⁴¹ «Արև», Կահիրե, 20 հոկտեմբերի 1932։

⁴² Նույն տեղում։